ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N 43-14

« 17» դեկտեմբերի 2014թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ավագանու թիվ 15-Ն,16,և 17 որոշումները :

Առդիր՝ 8 թերթ ;

Վահագնի համայնքի ղեկավարի տեղակալ՝ / Ա. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» դեկտեմբերի 2014թ. N 15 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Վահագնի գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնի գյուղական համայնքում 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կիրակոսյան Վահրամ			
Փարեմուզյան Սեր			
Քոչինյան Բորիս			
Քոչինյան Տելեմակ			
Մխիթարյան Վրեժ			

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ / _____ / Ա. Հովհաննիսյան

2014թ.---------- ------

գ. ----------

Հավելված
ՀՀ Լոռու մարզի

գյուղական համայնքի ավագանու
2014թ. դեկտեմբերի 15 -ի թիվ 15 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի , շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝
ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների , ինչպես նաև մինչև 200 քառակուս մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ հինգ հազար (5000) դրամ :

2) սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ դրամ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ դրամ,

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հիրգ հարյուր (1500) դրամ,

բ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հազար հինգ հարյուր (3500) դրամ :

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման , վերականգնման , արդիականացման , ՝ աշխատանքների (բացառությամբ հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար , եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառականնշանակության փոփոխություն՝ երեք հազար (3000) դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա , բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի , կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա , այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը :

3. Համայնքի վարչակազմ տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել մեկ հազար (1000) դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում , յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երկու հազար հինգ հարյուր (2500) դրամ

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպմսն դեպքում , յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երկու հազար հինգ հարյուր (2500) դրամ

5. Համայնքի տարածքում՝

1) բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն (350) դրամ

2) հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել ՝ հարյուր հիսուն հազար (150.000) դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար (50000) դրամ

7. Համայնքի տարածքում՝ առևտրի , հանրային սննդի , զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , բաղնիքները (սաունաները) , խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել

1) առևտրի օբյեկտների համար քսան հազար (20000) դրամ

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար հիսուն հազար (50000) դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ դրամ

4) խաղատների, կազմակերպման համար՝ դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար դրամ

6) վիճակախաղերի կազմակերպման համար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ դրամ

3) այլ արտաքին գովազդի համար դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ դրամ

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել երկու հազար (2000) դրամ

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառաթյամբ երթաղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվությանն համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ երկու հազար (2000) դրամ

11.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել մեկ հազար հինգ հարյուր (1500) դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել՝ երկու հազար (2000) դրամ

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարը սահմանել՝ մեկ հազար (1000) դրամ :

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ _____ Ա.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
«ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ»
ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 16

«15» դեկտեմբերի 2014 թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Վահագնի գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Վահագնի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 30-ի « Վահագնի գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին »N 4 որոշումը:

3. Որոշումը ուժի մեջ է մտնում 2015թ-ի հունվարի 1-ից :

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կիրակոսյան Վահրամ			
Փարեմուզյան Սիեր			
Քոչինյան Բորիս			
Քոչինյան Տելեմակ			
Սխիթարյան Վրեժ			

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ _____ Ա. Հովհաննիսյան

Հավելված 1
Վահագնի գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 16 որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 9
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	155000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	109000
Աշխատակազմի քարտուղար	1	109000
Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ	1	106000
Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	1	87000
Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	1	83000
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Վարորդ	1	66200
Պահակ	1	66200
Հավաքարար	1	66200
ընդամենը	9	847600

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
«ՎԱՀԱԳՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ»
ՎԱՀԱԳՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 17

«15» դեկտեմբերի 2014թ.

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով .

Համայնքի ավագանին որոշեց՝

Հաստատել Վահագնի համայնքի 2015թ.-ի բյուջեն ՝ ըստ հավելված 1-ի :

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կիրակոսյան Վահրամ			
Փարեմուզյան Սիեր			
Քոչինյան Բորիս			
Քոչինյան Տելեմակ			
Մխիթարյան Վրեժ			

Վահագնի գյուղապետի տեղակալ՝ _____ **Ա. Հովհաննիսյան**

Հավելված 1

ՀՀ Լոռու մարզի Վահագնի
համայնքի ավագանու 2014թ.
դեկտեմբերի 15-ի թիվ 17 որոշման

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ

1. եկամուտների գծով՝ 23314,7հազ. դրամ

1.1 հարկեր և տուրքեր 4406,6 հազ. դրամ

1.1.1 գույքային հարկեր անշարժ գույքից 2522.7 հազ. դրամ

Գույքահարկ համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար 34,2 հազ. դրամ

Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկ 2488.5հազ. դրամ

1.1.2 Գույքահարկ փողադրամիջոցների համար 1713,9 հազ. դրամ

1.2 Տեղական տուրքեր 170,0 հազ. դրամ

1.3 Այլ եկամուտներ 107.7 հազ. դրամ

2. ծախսերի գծով 23314,7 հազ. դրամ

2.1 Աշխատանքի վարձատվություն 11800.0 հազ. դրամ

2.2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում 5864.0 հազ. դրամ

2.3 Շարունակական ծախսեր 584.0 հազ. դրամ

2.4 Գործուղումների 150.0 հազ. դրամ

2.5 Պայմանագրային այլ ծառայությունների ձեռք բերում 880.0 հազ. դրամ

2.6 Այլ նպաստներ բյուջեից 680.0 հազ. դրամ

2.8 Այլ ծախսեր 4510.7 հազ. դրամ

Վահագնի գյուղապետի տեղակալ _____ **Ա. Հովհաննիսյան**